

ՆՈՒԱԳԱՐԱՅԻ ՋՐՎԷԺԻՆ ՕԳՏԱԽԷՏ

ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆՆ

Այնպէս տարւոյ նոյնմբերի 15 — 16ին՝ քսանուսէկ հարուածք հրանօթի հոշակեցին Բուֆալոյ քաղաքին բնակչաց՝ որ Նիազաւայի իրվէժն գործածուիլ սկսելով իբրեւ շարժիչ գորութիւն երկտարական մեքենայից՝ այսուհետեւ իրենց լոյս կը շնորհէ։

Այս կերպով աւարտեցաւ այն մեծ ձեռնարկութիւնն՝ որոյ համար չորս տարիներէ ՚ի վեր կ'աշխատէին հազար մարդիկներէ աւելի, որք հիւրընկալուած էին նորակառոյց եջոտա աւանին մէջ։— Շատ օտաւանակէ ի վեր Ամերիկացիք կը խորհէին օգտաւէտ ծառայութեան մի գործածել այն աշուար լրոյ քանակութիւնն, որ Նիազաւայի լանկին մէջ հոսելով 50 մետր բարձրութենէ, ոչ միայն վաճմ տեսարան մի կ'ընծայէ այաց, այլ նաեւ աշուար գորութեան աղբիւր է։

Նեւ-Յօրկի տէրութիւնն 1887ին՝ երկու միլիոն գոլդար ծախք ընելով գնեց իրվէժին շրջակայ երկիրները, քանդել տուաւ մինչեւ այն ստեն կառուցուած բոլոր շինութիւնները, որոց մէջ էր նաեւ մեծ պահուդի մի՝ որ իրվէժին սղանդի տեսքով ամենալեցող մասը խափաներ էր, և սկսաւ մտածել թէ ինչ կերպով առանց արուեստական և բնական գեղեցկութեան փնտ հասցնելու կարելի էր օգտակար ընել լրոյն գորութիւնը։

Հետեւաբար իրվէժին բարձրէն երեք ծակ բացին, որք ուղղաձիգ հոսանքը կը գահավիժեն երեք ինչորեքու մէջ, ամէն մէկ ծակէն լուրը 40 մետր բարձրութենէ վար թափելով։ Գահավիժած լրերը շարժումն կու տան երեք հատ պտուտակաձեւ անիւներու, և յետոյ կը հոսեն կ'երթան՝ երկու հազարաւ մետր երկայնութիւն ունեցող ստորերկրեայ ջրանցքներու միջէն։ Պտուտակաւոր անիւներն դառնալով շարժման մէջ կը գնեն երեք հատ ուղղաձիգ շարժիչ գերաններ, որոց գորութիւնն հաղորդուած է երեք հատ իրեքտրանիոն գործիքներու, իւրաքանչիւրն 5000 ձիոց գորութեան հաւասար. որով ընդ ամէնն 15,000 ձիոց գորութիւն կը ստացուի. որ է աննչաւ մասն այն կարողութեան՝ զոր կրնայ իրվէժը մաստակարարել։ Վասն զի ամէն մի մանորդի մէջ իրվէժը կը գահավիժէ 30,000 խորանարդ մետր լրոյ, որ կը

համապատասխանէ 6,000,000 ձիոց գորութեան։

Այսու հանդերձ 15,000 ձիոց գորութիւնն բաւական է հարկաւոր եղած շարժիչ կարողութիւնն ազդելու, որով վեց ընդարձակ գործարաններ մի և նոյն ժամանակ կ'աշխատին յառաջ երեւու պաղլեղ, բնածխակ, բնածխակ կրոյ և նաւոր մետաղական. մինչդեռ ՚ի նմին ժամանակի նոյն գորութիւնը կը ծառայէ նաեւ Բուֆալոյ քաղաքին փողոցներն ու տները լուսաւորելու, շարժելու այն տրամվայներն ու շոգեկառքերն որք կ'երթան երեւել Բուֆալոյն մինչև ՚ի Նիազաւայ՝ Տոնալանդայէն անցնելով։

Ժամանակաւ Նիազաւայի շարժիչ գորութեան արդիւնքը պիտի հաղորդուի 15 ամիս զամ աւելի հետաւորութեան վրայ, որով կարելի լինի Ալբանիի Նեւ-Յօրկի մայրաքաղաքին հասնիլ, որ 500 հազարամետր հեռաւորութեան վրայ կը գտնուի։



ԾՆԱԽՈՏԻ ԸՐԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ

Ծխախոտի չափազանց գործածութիւնն՝ ինչպէս ամենուրեւ յայտնի է՝ շատ փնտնեք յառաջ կը բերէ. հոս քանի մը հատը յիշելուիդք չենք համարիլ ի գգուութիւն աւանդող արջի մը զգոյժանին, Նիալ մաղձաւանջ ըսուած հիւանդութիւնը կը պատճառէ, որով ախտակիրն յանկարծակի կ'ընդոստնուի քնէն, շատ զժուարաւ կը խօսի՝ կը շնչէ, ստամոքսին վերայ սաստիկ ծանրութիւն կը զգայ, երկիւղալի երազներ կը տեսնէ, մեծամեծ վիշեր կը բացուին իւր աչաց առջև և ուրաւակապ կը վազեն ետեւէն ինքը հոն ձգելու համար, և գարհուրանքով արիւն քրտինք մտած կ'արթննայ։ Բաց աստի փոքր ինչ ախտաւթեամբ կը յոգնի և մարտդուութեան խանգարումն կը զգայ, մինչև անգամ մարդու բնութեան վրայ իսկ փոփոխութիւն կը բերէ, ինչպէս՝ Նիալին մարդը կ'ընէ զայրացկոտ, որուն կը հետեւ մարդատեցութիւն, բազմութենէ խոյս տալ և սաստիկ ախտաւթական ախտի ենթակայ ըլլալ։

Տեսանելեաց թաղանթն, այսինքն՝ ցանց ցատաւակն, որ լղային դրութեան մէկ մասն է, ամենափափուկ ըլլալով, շատ դիւրաւ կը զգայ ծխախոտի ազդեցութիւնը, և գոյները լաւ չի ցուցնեն, ըստ այնմ տեսութեան կա-